

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԴԱՅ ԼԵՋՎԱՔԱՆԸ
(Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ցնծագին սրտով համ գրիչ վերցրել գրելու մեր ժամանակի գիտության հազ-
վագյուտ երախտավորներից մեկի՝ մեծատաղանդ լեզվաբան-հայագետ ակա-
դեմիկոս Գևորգ Ջահուկյանի մասին՝ նրա ծննդյան 60-ամյակի առթիվ: Դա
որքան հաճելի, նույնքան էլ դժվարին պարտականությունն է: Գրել Ջահուկյան



գիտնականի մասին՝ նշանակում
է ներկայացնել ժամանակակից
հայ, այլև ընդհանուր լեզվաբա-
նության ամենաբարձր մակար-
դակը՝ նրա շատ արժեքավոր
վաստակի սահմաններում: Այդ
վաստակի հանգամանալից բնու-
թագրումը ընդարձակածավալ
հատոր կպահանջեր: Իսկ այս
ղեկքում, ըստ եղած հնարավո-
րության, պիտի բավարարվեմ
համառոտ խոսքով:

Չափազանց բեղմնավոր է
Գ. Ջահուկյանի գրիչը, խիստ
լայն՝ նրա գիտական հետաքր-
քությունների շրջանակները:
Ապավինելով ազնիվ, տքնաջան,
անընդմեջ ու նպատակասլաց աշ-
խատանքին՝ նա շարքային ուսուց-
չից հասել է ակադեմիկոսի բար-

ձրու աստիճանին: Նա նախանձելի հետևողականությամբ է օգտագործել իր
ժամանակը, հիանալիորեն գործադրել իր բացառիկ տաղանդը: Դրա ար-
դյունքը եղել է այն հսկայական վաստակը, որը մեծ չափով առաջ է մղել հայ
լեզվաբանական գիտությունը՝ միաժամանակ համընդհանուր ճանաչում բե-
րելով ականավոր գիտնականին:

Գ. Ջահուկյանի բաղձնական գործունեության մեջ կենտրոնական տեղ
է զբաղում գիտահետազոտական աշխատանքը: Նրա ստեղծած բաղձաթիվ
մենագրական ուսումնասիրություններից շատերն իրենց բարձր արժեքով վա-
ղուց արդեն մտել են հայ լեզվաբանության ոսկե ֆոնդը՝ նոր աստիճանի
բարձրացնելով դարերի խորքից եկող այդ հարուստ գիտությունը: Գ. Ջա-
հուկյանի մեծարժեք գործերով մի ուրույն շրջան է կազմավորվել նրա պատ-
մության մեջ:

Ունենալով գիտական վիթխարի պատրաստություն՝ Գ. Ջահուկյանը զե-
վեցիկ ներդաշնակությամբ է օգտագործում նաև դասական լեզվաբանության, և

կառուցվածքային ուղղության նվաճումները՝ խստորեն պահպանելով յուրաքանչյուրի իրավունքները, մաթեմատիկական ճշգրտությամբ կիրառելով դրանց մշակած մասնագիտական մեթոդները: Շատ ղեկավարում էլ հանգես է եկել նաև որպես նորարար՝ առաջ քաշելով և լուծելով դիտական ակնհայտ կարևորություն ունեցող բազմաթիվ խնդիրներ:

Նա գիտական ասպարեզ իջավ լրջորեն նախապատրաստված, ուսումնառության փայլուն դպրոց անցած, իմ այդ էր պատճառը, որ նրա առաջին իսկ աշխատությունները մեծ ընդունելության արժանացան: Շատ շուտով նշմարվեցին Գ. Ջահուկյանի աշխատանքի ուղղվածության սահմանագծերը՝ հայերենագիտություն, հայ բանասիրություն, պատմահամեմատական, ապա և ընդհանուր լեզվաբանություն: Իմ այսպես, տարեցտարի նախանձելի թափով աճում էր գիտության խորահմուտ պատմաբանն ու լեզվի մեծ տեսաբանը: Իսկ այսօր, ահա, առանց վարանման կարելի է ընդգծել նրա միջազգային ճանաչումը:

Իբրև գիտության պատմաբան՝ Գ. Ջահուկյանը սկսում է ակունքներից, քայլում նրա ընթացքի հետ ու զալիս մինչև իր ժամանակները: Նա իր առջև խնդիր է դնում վեր հանել ու ցույց տալ տվյալ բնագավառի բոլոր էական նվաճումներն իրենց զարգացման ընթացքի մեջ շեշտելով դրանց դերը ոչ միայն գիտության ներկայի, այլև ապագայի համար:

Նրա առաջին մենագրությունը վերաբերում էր քերականագիտական մշտյի սկզբնավորմանն ու զարգացմանը հին և միջնադարյան Հայաստանում (1954 թ.): Ուսումնասիրության ոլորտի մեջ ընդգրկելով ձեռագիր շրջանի քերականական շուրջ 30 աշխատություն՝ հեղինակը փայլուն կերպով է հաղթահարել գործի հետ կապված դժվարությունները: Գ. Ջահուկյանն իրեն հատուկ շրջահայացությամբ չէր կարող բավարարվել նյութի նկարագրությամբ սոսկ քերականագիտական առումով: Նա ըստ անհրաժեշտության իր հիմնական խնդրի հետ շոշափել է նաև բանասիրական, փիլիսոփայական և ընդհանրապես պատմամշակութային շատ կարևոր հարցեր: Իր գործի համար ամուր պատվանդան է ստեղծել հայ քերականական մտքի սկզբնավորման արտաքին ու ներքին նախադրյալների քննարկումով: Խորացել է հունական անտիկ փիլիսոփայական ուղղությունների ունեցած դերի, հունարեն լեզվի նյութով ստեղծված քերականությունների և հատկապես հելլենիզմի շրջանում լիերասանդրիայի ու Պերգամի դպրոցների հսկայական ներդրումների մեջ: Ընդհանրապես հայ քերականագիտական մտքի սկզբնավորման ու զարգացման մեջ հույն մեծ քերական Դիոնիսիոս Թրակացու հայտնի երկի կատարած դերը: Նա հատուկ տեղ է առանձնացրել նրա քննական բնութագրման, հայերեն թարգմանության ուսումնասիրման համար: Լկա մեկ առ մեկ քննարկելով այդ երկի հայ մեկնիչների առաջին ու հետագա սերունդների մեկնությունները՝ հետամուտ է լինում նրանց ինքնուրույն մոտեցման և նոր մտքերի ցուցաբերման բացահայտմանը: Լկյալիսով նա զծագրում է հայ քերականագիտության սկզբնավորման ու ձևավորման պատկերը: Լկնուհետև անցնում է քերականական առաջին ինքնուրույն երկերին, որոնք կերտված են հայերենի բուն իրավունքների բնութագրման հիման վրա:

Լկյա աշխատության տրամաբանական շարունակությունն է «Գրաբարի քերականության պատմությունը» (1974 թ.), որն ընդգրկում է տպագիր շրջա-

ներ և պատմական հաջորդականությամբ բնութագրում է գրաբարի քերականությանը վերաբերող այն աշխատությունները, որոնք ստեղծվել ու հրապարակվել են XVII—XIX դդ. ընթացքում: Իրանը զբաղեցնում են հայերեն, և՛ ուրիշ լեզուներով: Քերականության այս երեք դարերի պատմությունը ներկայացված է քերականությունների բնույթից բխեցված հետաքրքրական շրջանառության մամբ: Աշխատության երկու մասերով տրված է լատինատիպ և ինքնատիպ քերականությունների հանգամանալից բնութայունը: Աշխատության ներածությունից նաև տեղեկանում ենք, որ անխոնջ գիտնականն ավարտել է աշխարհագրի քերականության պատմության շարադրումը, որի հրապարակումով մենք կունենանք հայերենի քերականության պատմության ամբողջացում: Հայերենագիտության մեջ դա աննախագեղիկ երևույթ է և երևելի կոթող կլինի հայագիտությամբ զբաղվող սերունդների համար:

Գիտական յուրօրինակ սխրանք է Գ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատոր ստվարածավալ ուսումնասիրությունը (1960—1962): Լեզվաբանական գրականության մեջ կային լեզվաբանության պատմությանը նվիրված սակավաթիվ աշխատություններ, քայքայ գրանք հեռու էին այդպիսի լայն ընդգրկում ունենալուց: Գ. Զահուկյանի այս աշխատությունը լեզվաբանության պատմության ուսումնասիրության մեջ միջազգային առումով նոր փուլ էր նշանավորում: Քաջ գիտակցելով, որ այդպիսի ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունի նյութի շրջանառության մամբ, Զահուկյանը մշակել է շրջանառության միանգամայն ինքնատիպ սկզբունքներ՝ ձգտելով հասնել նյութի իրական վիճակի լիակատար համապատասխանության: Լեզվաբանության պատմության ուսումնասիրման համառոտ տեսություն տալուց հետո հեղինակն այդ լայնածավալ ու բազմաճյուղ գիտության պատմությունը շարադրում է այսպիսի շրջաններով՝ ա) ստատիկ-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (հին լեզվաբանություն—լեզվաբանական գիտելիքների սկզբնավորումից մինչև XVIII դ. վերջը), բ) պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման շրջան (նոր կամ «դասական» լեզվաբանություն— XIX դ.), գ) սիստեմային-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան (նորագույն լեզվաբանություն— XX դ.): Մերանք ամենաընդհանուր բաժանումներն են: Յուրաքանչյուր շրջան տրոհված է ենթաշրջանների, որոնք մանրամասն բնութագրումներով ընթերցողի առաջ բաց են անում այս չափազանց հետաքրքրական և ճոխ գիտության բազմաթիվ ծախքերը: Քաջատեղյակ հեղինակի ուշադրությունից չի վրիպել ոչ մի ուղղություն կամ ենթաուղղություն, եթե այն որևէ նշանակալից հետք է թողել պատմության մեջ: Նմանօրինակ աշխատանքը կարող էր հաջողությամբ զուգարկել մի գիտնական, որն ունենար գիտելիքների անսպառ պաշար, տիրապետեր կամ ծանոթ լիներ տարբեր ընտանիքների պատկանող շատ լեզուների, ուսումնասիրած լիներ բազմաթիվ մասնավոր լեզվաբանություններ, քաջ պատկերացներ լեզվաբանության կապերը մյուս գիտությունների հետ, իմանար մյուս գիտությունների պատմությունը և այլն: Հենց այդպիսին է այս դոկտորականավոր հեղինակը, որը, իրոք, պատվով է իրադրվել իր հանդուգն ծրագրերը: Սա մի կոթողային երկ է, որի հրապարակումից հետո տարբեր լեզուներով երևան են եկել թեմատիկ առումով համանման մի շարք գրքեր, որոնք, սակայն, և ընդգրկման լայնությամբ, և՛ խորությամբ դեռ չեն հաս-

նում սրան, Յուրարանյուր հայ մարդ կարող է հոյարտանալ, որ իր մայրենի լեզվով ստեղծվել է այսպիսի գիրք:

Քահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքների ու նոր մտահոր-դացումների գրական տեսակետից բնորոշ աշխատություն է նրա վերջին տարիների արժևորվող գործերից «Ընդհանուր և հայ լեզվաբանություն», որը շարադրված է ռուսերեն լեզվով (1978 թ.): Առավել ևս այս (ինչպես և ուրիշ) աշխատությունից այն տպավորությունն է ստացվում, որ հեղինակը կանգնած է լեզվաբանական գիտության զագաթնակետին, հաղորդակից է նրա այսօրվա ամեն մի էական, ուշադրավ ու նշանակալից իրադարձությանը և իր ակտիվ խոսքն է ասում դրանց վերաբերյալ: Հատկապես ուշադրության են արժանի նրա դրույթները լեզվաբանական գիտության ու նրա ուսումնասիրման առաջ-կայի: Լեզվի մակարդակների, լեզվական կադապրավորման, տիպաբանս-կան վերլուծությունների հայեցակետերի և շատ նմանների մասին:

Քահուկյանը հայոց լեզվի խոշոր հետազոտող է: Իբրև ուսումնասիրու-թյան առարկա նա հայոց լեզուն վերցնում է իր ամենալայն սահմանների մեջ, ռենում թե՛ տարժամանակյա, թե՛ համաժամանակյա մոտեցմամբ: Իր գոր-ծունեության այս բնագավառի ծրագիրը նա մշակել էր բավական վաղ, երբ սրեթե առաջին քայլերն էր անում գիտության մեջ: Այս ղեկըում նկատի ունեմ հայոց լեզվի պատմության նրա շրջանաբաժանումը, որը կատարված էր գի-տական ամուր հիմնավորվածությամբ և հիմք դարձավ թե՛ իր և թե՛ իր աշա-կերտների հետազոտությունների համար: Հիսնական թվականների վերջերից սկսած՝ մեկը մյուսի ետևից հրապարակ եկան նրա բազմաթիվ մենագրու-թյունները, որոնք տարբեր կողմերից ու տարբեր մոտեցումներով վեր են հա-նում, բնում մեր ճոխ լեզվի ու նրա տարբեր շրջանների կառուցվածքային իրավությունները: Ահա աՀին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» գիրքը (1958 թ.), որը ծագումնաբանական ու տիպաբանական ուսումնասի-րությունների համատեղման շատ բնորոշ օրինակ է: Բուն հետազոտական մա-սում նկատի են առնված հնդեվրոպական ձևաբանական տիպը և նրա ձևափո-խությունը հայերենում, ապա՝ հոլովման կարգերի, միջոցների, հիմքերի ծա-լումը: Լայն տեղ է տրված հոլովման համակարգի տիպաբանությունը:

Ահա և աՀայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» ամփոփ, բայց շատ ինքնատիպ աշխատությունը (1969 թ.), որով նոր փուլ էր սկսվում Ք. Քա-ուկյանի հետազոտական աշխատանքում, Այստեղ հեղինակը հանդես է դա-լիս ուսումնասիրման պատմական ու կացութային մոտեցումների հստակ սահմանազծումով: Սրան հաջորդեց «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974 թ.) մեծարժեք ուսումնասիրությունը, որտեղ առավել չափերով են օգտագործված լեզվաբանության կառուցվածքային ուղղության նվաճումները: Նոր մոտեցմամբ ժամանակակից հայոց լեզուն բնված է իր բոլոր մակարդակներով: Թարմ և ուշագրծվող դրույթներ են հանդես բերված լեզվական միավորների ու դրանց գործառությունների վերաբերյալ: Հա-յագիտության մեջ առաջին անգամ ձևաբանությունը ներկայացվում է որպես հոլովման ու խոնարհման հարացույցների տեսություն: Իր հիմնական կողմե-րով նորույթ է փոխկադապրում մասը:

Ք. Քահուկյանի գիտահետազոտական հետաքրքրությունների սահմանե-րում պատկանելի տեղ են բռնում հայոց լեզվի ծագումնաբանությունը և այլ

լեզուների հետ ունեցած նրա առնչումներին վերաբերող հարցերը: Դրանց լուսարանմանը պիտության նվիրյալ աշխատավորը հատկացրել է աշխատությունների մի սովոր շարք: Հիշենք մի քանիսը. «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» (1964 թ.), «Очерки по истории дописменного периода армянского языка» (1967 թ.), «Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков» (1967 թ.), «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (1970 թ.) և այլն: Նա բազմաթիվ նոր ստուգաբանություններով հարստացրեց մեր պատկերացումները հայերենի շատ արմատների ու բառերի ծագման մասին:

Լեզվաբանության նորագույն նվաճումների լույսի տակ Գ. Զահուկյանը յուրօրինակ մոտեցմամբ վեր հանեց հայ բարբառագիտության շատ էական հարցեր՝ զգալիորեն զարգացնելով այդ գիտաճյուղը: Դրա փայլուն ապացույցը եղավ «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը (1972 թ.), որը եկավ հաստատուն տեղ գրավելու հայերենագիտության մնալուն երկերի շարքում:

Բազմաթիվ ու բազմաբնույթ են նրա գիտական արժեքավոր հոդվածները, որոնց սոսկ թվարկումն իսկ հեռուն կտաներ:

Գ. Զահուկյանը իր բազմազբաղ հետազոտական գործունեությանը մեծ հաջողությամբ զուգակցում է և գիտամանկավարժական, գիտակազմակերպչականը, յասարակականը և այլն:

Դ. Զահուկյանի անխոնջ, խիստ արդյունավետ աշխատանքը միշտ էլ պատշաճ ուշադրության է արժանացել: Նա արժանացել է «Պատվո Նշան» շքանշանի, ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրի, մեդալների, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործի բարձր կոչման: Իր կյանքի 60 տարին բոլորելիս նա գտնվում է ուժերի ծաղկման շրջանում, լեցուն է նորանոր մտահղացումներով: Ուստի, ողջունելով նրան այդ հորելյանի առթիվ՝ մաղթենք բաջառողջություն և այնքան պետքական մտահղացումների իրագործում:

ԱՇՈՏ ԱՐՐԱՆԱՄԱՆ
ՀՍՍՀ ԴԱ Իզրակիզ աղղաժ

ՍԻՐԵԼԻ ՀՈՐԵԼՅԱՐ.

«Լրաբերի» խմբագրական կոլեգիան, որի բազմամյա անդամն եմ Դուր, շերմորեն ողջունում է Ձեզ՝ նշանավոր գիտնականիդ, գիտության վաստակավոր գործիդ, Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ:

Խմբագրական կոլեգիան սրտագին մաղթում է Ձեզ բաջառողջություն, երկարամյա կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

«ԼՐԱՐԵՐԻ» ԽՈՐԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ